

Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատմամբ անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման ծրագրի շրջանակներում անտառապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության նպատակով անցկացվող մրցույթի մրցութային հանձնաժողովի

8-ը հունիսի 2012թ.

1. Հայտարարել Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատմամբ անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման ծրագրի շրջանակներում անտառապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

2. Սահմանել, որ՝

- 1) Մրցույթի հաղթողի կողմից համապատասխան անտառապատումը պետք է իրականացվի «Հայաստան» ՊՈԱԿ Գուգարքի և Լավվարի անտառտնտեսություններում 315 հա տարածքի անտառապատում՝ աշխատանքային նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) սահմանված տարածքներում և Նախագծով սահմանված կարգով ու պայմաններով.
- 2) Մրցույթն անց է կացվելու մեկ լոտով.
- 3) Մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետը 2012 թվականի հուլիսի 16-ը, ժամը 12<sup>00</sup>-ն է.
- 4) Մրցույթի մասնակիցը կամ նրա լիազորված անձը մասնակցության հայտը պետք է ներկայացնեն «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերության գրասենյակ՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Խանջյան փող. շենք 19 հասցեով.
- 5) հայտը և ներկայացվող փաստաթղթերը պետք է կազմված լինեն հայերեն լեզվով: Հայտը և ներկայացվող փաստաթղթերի փաթեթը պետք է դրվի ծրարի մեջ, որը պետք է սոսնձվի և կնքվի հայտատուի կողմից.
- 6) Մրցույթին ներկայացված հայտերի բացումն ու քննարկումը տեղի կունենա 2012 թվականի հուլիսի 16-ին, ժամը 12<sup>00</sup>-ին՝ «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերության գրասենյակում՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Խանջյան փող. շենք 19 հասցեով.
- 7) Մրցույթին ներկայացված հայտերի քննարկման արդյունքների ամփոփման վերջնաժամկետը 2012 թվականի հուլիսի 23-ն է.
- 8) Մրցույթի արդյունքների վերաբերյալ բոլոր մասնակիցները կստանան գրավոր ծանուցում.
- 9) Մրցույթի արդյունքներով որպես հաղթող՝ անտառապատում իրականացնող կազմակերպություն ընտրված սուբյեկտի հետ համապատասխան պայմանագիր կնքելու վերջնաժամկետը 2012 թվականի հուլիսի 30-ն է:

3. Հաստատել Մրցույթի՝

- 1) հայտի ձևը՝ համաձայն Հավելված 1-ի.
- 2) հայտին կից ներկայացվելիք փաստաթղթերի ցանկը, անտառապատմանը ներկայացվող պահանջներն ու հայտերի գնահատման չափանիշները՝ համաձայն Հավելված 2-ի:
- 3) հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված 3-ի:
- 4) Մրցույթի հաղթողի հետ կնքվելիք օրինակելի պայմանագիրը՝ համաձայն հավելված 4-ի:

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ. Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ս. Երիցյան

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

\_\_\_\_\_ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու Թեղուտի հան-  
մասնակցի անվանումը քավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատմամբ  
անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման ծրագրի շրջանակներում անտառա-  
պատման աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթին:

Մրցույթում հաղթելու դեպքում պարտավորվում եմ «Թեղուտ» ՓԲԸ հետ կնքել անտառա-  
պատման աշխատանքների իրականացման պայմանագիր (մրցութային փաթեթում ներկայացված  
օրինակելի պայմանագրի ձևով) և յուրաքանչյուր մեկ հեկտար տարածքի անտառապատումը (նե-  
րառյալ մինչև անտառի շարք տեղափոխելը խնամքի աշխատանքները) իրականացնել  
վճարի չափը թվերով ( \_\_\_\_\_ ) վճարի չափը բառերով) դրամ վճարի դիմաց:

Կից ներկայացնում եմ մրցույթի համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Առդիր՝ \_\_\_\_\_ թերթ:

\_\_\_\_\_ Մասնակցի անվանումը \_\_\_\_\_ ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը \_\_\_\_\_ ստորագրությունը

Կ. Տ.

« \_\_\_\_ » հուլիսի 2012թ.

Հայտին կից ներկայացվելիք փաստաթղթերի ցանկը, անտառապատմանը ներկայացվող պահանջները և հայտերի գնահատման չափանիշները

1. Մրցույթին մասնակցելու հայտի հետ միասին մասնակիցը պետք է ներկայացնի՝

1) մասնակցի պետական գրանցման վկայականի, ներառյալ բոլոր ներդիրների պատճենները.

2) 2009-2011 թվականների ընթացքում համանման ծառայությունների մատուցման պայմանագրերի և կատարողական փաստաթղթերի պատճենները.

3) հարկային մարմին ներկայացրած և վերջինիս կողմից ընդունված 2011 թվականի շահույթահարկի հաշվարկը՝ հաստատված հարկային մարմնի կողմից կլոր (բնօրինակ) կնիքով.

4) տեղեկանք հաստատված հայտատուի գործադիր մարմնի ղեկավարի կողմից տեխնիկական միջոցներով և մասնագետներով հագեցվածության և համապատասխան (անտառապատման և անտառի խնամք իրականացնելու) ոլորտում փորձառության վերաբերյալ.

5) տեղեկանք ՀՀ դատական դեպարտամենտից՝ անվճարունակ ճանաչված չլինելու մասին.

6) անտառապատման աշխատանքների նախագծի Գիրք 2-ում ներառված ծավալային աշխատանքների ամփոփագիրը՝ հայտով ներկայացված գնային առաջարկին համապատասխան լրացված միավորների արժեքներով և գումարներով.

7) հայտով ներկայացված գնային առաջարկին համապատասխան անտառապատման աշխատանքների ողջ ծավալի արժեքի 5 տոկոսի չափով բանկային երաշխիք՝ տրված Հայաստանի Հանրապետությունում գործող բանկի կողմից, որի գումարը «Թեղուտ» ՓԲԸ պահանջով ենթակա է անվերապահ վճարման «Թեղուտ» ՓԲԸ-ին՝ մրցույթում հաղթող ճանաչվելու դեպքում մասնակցի կողմից անտառապատման աշխատանքների կատարման պայմանագրի կնքումից կամ ցանկացած եղանակով մրցույթին ներկայացված հայտից հրաժարվելու դեպքում:

2. Անտառապատմանը ներկայացվող պահանջներն են՝

1) Անտառապատումը պետք է իրականացվի «Հայաստան» ՊՈԱԿ Գուգարքի և Լավարի անտառտնտեսություններում 315 հա տարածքի անտառապատում» աշխատանքային նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) սահմանված տարածքներում.

2) Անտառապատումը պետք է իրականացվի Նախագծով սահմանված կարգով ու պայմաններով:

3. Մրցույթին ներկայացված հայտերի գնահատման նպատակով հանձնաժողովը հիմք է ընդունում՝

1) հայտի համապատասխանությունը մրցույթի պայմաններին.

2) հայտում ներկայացված տվյալների արժանահավատությունը.

3) հայտով ներկայացված գնային առաջարկը:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատմամբ անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման ծրագրի շրջանակներում անտառապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի մասին

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2008 թվականի օգոստոսի 22-ի № 295-Ա և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2008 թվականի օգոստոսի 14-ի № 151-Ա համատեղ հրամանով հաստատված «Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատմամբ անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման ծրագրի» համաձայն ստեղծված մրցութային հանձնաժողովը հայտարարում է Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատմամբ անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման ծրագրի շրջանակներում անտառապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ:

Մրցույթն անց է կացվելու մեկ լոտով՝ «Հայանտառ» ՊՈԱԿ Գուգարքի և Լավարի անտառտնտեսություններում 315 հա տարածքի անտառապատում՝ համաձայն նախագծի:

Մրցույթին հայտ ներկայացնող կազմակերպությունը պետք է ունենա անտառապատման և անտառային տնտեսության ոլորտում գործունեության փորձ, տեխնիկական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ և մրցութային հանձնաժողովին ներկայացնի դրանց առկայությունը հաստատող փաստաթղթեր:

Մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետը 2012 թվականի հուլիսի 16-ը, ժամը 12<sup>00</sup>-ն է: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերության գրասենյակ (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Խանջյան փող. 19) ներկայացնել մասնակցության հայտ:

Մասնակցության հայտերի քննարկումը տեղի կունենա 2012 թվականի հուլիսի 16-ին, ժամը 12<sup>00</sup>-ին՝ «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերության գրասենյակում՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Խանջյան փող. 19 հասցեով: Մրցույթին ներկայացված հայտերի քննարկման արդյունքների ամփոփման վերջնաժամկետը 2012 թվականի հուլիսի 23-ն է: Մրցույթի արդյունքների վերաբերյալ բոլոր մասնակիցները կստանան գրավոր ծանուցում: Մրցույթի արդյունքներով որպես անտառապատում և խնամք իրականացնող կազմակերպություն ընտրված սուբյեկտի հետ համապատասխան պայմանագիր կնքելու վերջնաժամկետը 2012 թվականի հուլիսի 30-ն է:

Մրցույթի պայմաններին առավել մանրամասն ծանոթանալու, «Հայանտառ» ՊՈԱԿ Գուգարքի և Լավարի անտառտնտեսություններում 315 հա տարածքի անտառապատման նախագիծը, անտառապատման աշխատանքների օրինակելի պայմանագիրը, ինչպես նաև մրցույթին մասնակցելու հայտի ձևը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերության գրասենյակ՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Խանջյան փող. 19 հասցեով, կամ այցելել ընկերության ինտերնետային կայք՝ [www.teghout.am](http://www.teghout.am):

**Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր № \_\_\_\_\_**  
**Աշխատանքների կատարման մասին**

ք.Երևան

«\_\_» \_\_\_\_\_ 2012թ.

«Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերությունը (պետական գրանցման համարը՝ 286.120.06078, գրանցման օրը՝ 22.05.2006թ, գրանցման հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Խանջյան փող. 19, ՀՎՀՀ 02700773) (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Գլխավոր տնօրեն Վալերի Մեջլումյանի, որը հանդես է գալիս ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

\_\_\_\_\_ (պետական գրանցման համարը՝ \_\_\_\_\_, պետական գրանցման օրը՝ \_\_\_\_\_թ., գրանցման հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, \_\_\_\_\_, ՀՎՀՀ՝ \_\_\_\_\_) (այսուհետ՝ Կատարող), ի դեմս \_\_\_\_\_, որը հանդես է գալիս \_\_\_\_\_ կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

երկուսը միասին այսուհետ նաև՝ Կողմեր,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 1-ի «Թեղուտի պղնձամուլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու և հողամասեր տրամադրելու մասին» № 1278-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում) և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2008 թվականի օգոստոսի 22-ի № 295-Ա և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2008 թվականի օգոստոսի 14-ի № 151-Ա համատեղ հրամանով հաստատված «Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատմամբ անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր), ինչպես նաև Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման նպատակով անտառային ծածկույթի հատմամբ անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման ծրագրի շրջանակներում անտառապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության նպատակով անցկացվող՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի հունիսի 3-ի № 94-Ա հրամանով (այսուհետ՝ Հրաման) ստեղծված մրցութային հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 6-ի նիստի ընթացքում կայացված № \_\_ որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

### **1. Պայմանագրի առարկան**

1.1. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է «Հայաստան» ՊՈԱԿ Գուգարքի և Լավվարի անտառտնտեսություններում 315 հա տարածքի անտառապատում» աշխատանքային նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) սահմանված՝ \_\_\_\_\_ հեկտար հողատարածքներում Նախագծով սահմանված կարգով ու պայմաններով կատարել ցանկապատման, անտառապատման, անտառապատ տարածքի խնամքի, ինչպես նաև Նախագծով սահմանված այլ աշխատանքներ (այսուհետ՝ Աշխատանքներ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով ու պայմաններով ընդունել Կատարողի կողմից իրականացված Աշխատանքներն ու վճարել դրանց դիմաց:

## 2. Ընդհանուր դրույթներ

2.1. Կատարողը երաշխավորում է, որ ինքն ունի Պայմանագրով սահմանված Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ քանակի և տեսակի տեխնիկական միջոցներ ու համապատասխան որակավորման մասնագետներ:

2.2. Աշխատանքները պետք է իրականացվեն Նախագծով սահմանված կարգով ու պայմաններով՝ պահպանելով դրանց կատարման հերթականությունն ու մեթոդները: Նախագիծը կցվում է Պայմանագրին և հանդիսանում է դրա անբաժանելի մասը:

2.3. Պայմանագրի շրջանակներում Աշխատանքները պետք է իրականացվեն \_\_\_\_\_ տարածքում (այսուհետ՝ Տարածք), որի հատակագիծը ներկայացված է Պայմանագրի անբաժանելի մասը կազմող № 1 հավելվածում (այսուհետ՝ Հավելված 1):

2.3.1. Պատվիրատուն իրավասու է արգելել Տարածքում Աշխատանքների հետագա կատարումը, եթե դրանք կատարվում են Նախագծով սահմանված պայմանների խախտմամբ կամ երրորդ անձանձ իրավունքների և օրինական շահերի ոտնահարմամբ: Այս հիմքով պայմանագրի դադարման դեպքում Կատարողի փաստացի կատարած ծախսերի հատուցում չի իրականացվում, իսկ Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից պահանջել վնասների հատուցում:

2.4. Պայմանագրի շրջանակներում Կատարողը մասնավորապես պետք է իրականացնի հետևյալ Աշխատանքները՝

2.4.1. Տարածքի ցանկապատման աշխատանքներ՝ Նախագծով սահմանված երկարությամբ ու բարձրությամբ, ներառյալ ցանկապատի տարածքի տեղաձևելը, համապատասխան քանակի փոսեր փորելը, հենայուններ նախապատրաստելը, դրանք փոսերին մոտեցնելն ու տեղադրելը, փշալարերն ամրացնելը, ինչպես նաև համապատասխան դարպասներ պատրաստելն ու տեղադրելը (այսուհետ՝ Ցանկապատման աշխատանքներ):

2.4.2. Տարածքում անտառ-մշակույթների հիմնման՝ անտառապատման աշխատանքներ, ներառյալ համապատասխան քանակի և ծավալի խրամատներ և (կամ) փոսեր փորելը, խրամատներում առկա քարերը հավաքելը, սերմնաբուսակները և (կամ) մանր տնկիները տնկման համար նախապատրաստելը և տնկելը, սերմնաբուսակները և (կամ) մանր տնկիները տնկելուց հետո խրամատների ուղղումը, ինչպես նաև Նախագծով սահմանված այլ աշխատանքներ կատարելը (այսուհետ՝ Անտառապատման աշխատանքներ):

2.4.3. Տարածքում սերմնաբուսակներով և (կամ) մանր տնկիներով հնարավոր լրացման աշխատանքները (այսուհետ՝ Լրացման աշխատանքներ):

2.4.4. Տարածքում հիմնված անտառ-մշակույթների խնամքի աշխատանքներ, ներառյալ ագրոտեխնիկական խնամքը, հիմնված անտառ-մշակույթները մինչև անտառի շարք փոխադրելու համար անհրաժեշտ պայմանների ապահովումը (այսուհետ՝ Խնամքի աշխատանքներ):

2.4.5. Տարածքում հիմնված անտառ-մշակույթների միջշարքերում խոտհունձի աշխատանքները (այսուհետ՝ Խոտհունձի աշխատանքներ):

2.5. Պայմանագրի 2.4 կետով սահմանված բոլոր Աշխատանքները Կատարողը պետք է իրականացնի իր ուժերով, միջոցներով ու սարքավորումներով՝ օգտագործելով իր և (կամ) ներգրավված մասնագետների աշխատանքը, սեփականության իրավունքով իրեն պատկանող և (կամ) օրենսդրությամբ թույլատրելի եղանակներով ձեռք բերված նյութերը, սերմնաբուսակները, մանր տնկիները և այլ ապրանքանյութական արժեքները:

2.6. Պայմանագրի շրջանակներում Կատարողի կողմից իրականացվելիք առանձին Աշխատանքների և (կամ) գործողությունների տեսակներն ու դրանց ծավալները, կատարման ժամանակացույցը (ըստ տարիների), օգտագործվելիք պաշարների և այլ նյութերի տեսակներն ու դրանց ծավալները սահմանված են Նախագծով:

2.7. Պայմանագրի շրջանակներում Կատարողի կողմից իրականացվելիք Աշխատանքների արդյունքում հիմնված անտառ-մշակույթները Աշխատանքների ավարտից և անտառի շարք փոխադրելու համար պատրաստ դառնալուց հետո հանդիսանալու են այդ հողատարածքի սեփականատիրոջ սեփականությունը:

2.7.1. Պայմանագրով սահմանված Աշխատանքների ամբողջական կատարումից և Պայմանագրով սահմանված կարգով դրանց հանձնում-ընդունումից հետո Կատարողը պարտավոր է իրականացված Աշխատանքների արդյունքում հիմնված անտառ-մշակույթները ու դրանց ցանկապատերը համապատասխան հանձնման-ընդունման ակտով հանձնել այդ հողատարածքի սեփականատիրոջը (սեփականատիրոջ ներկայացուցչին):

2.7.2. Եթե Կատարողը Պայմանագրով սահմանված կարգով կատարել է Աշխատանքները և դրանց արդյունքում հիմնված անտառ-մշակույթներն իրենց խտության, միջին բարձրության, խնամվածության և օրենսդրությամբ կամ Պայմանագրով սահմանված այլ անհրաժեշտ ու պարտադիր չափանիշներով բավարարում են դրանք անտառի շարք փոխադրելու պայմաններին, սակայն համապատասխան հողատարածքի սեփականատերը (սեփականատիրոջ ներկայացուցիչը) հրաժարվում կամ ակնհայտ խուսափում է դրանք ընդունելուց, ապա հիմնված անտառ-մշակույթներն ու դրանց ցանկապատները Կատարողից պետք է ընդունի Պատվիրատուն:

2.7.3. Մինչև Պայմանագրի 2.7.1 և 2.7.2 կետերով սահմանված գործողությունների կատարումը Կատարողը պարտավոր է ապահովել Տարածքի, նրանում հիմնված անտառ-մշակույթների, տեղադրված ցանկապատների, դարպասների և այլ ապրանքանյութական արժեքների պահպանությունը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ներգրավելով համապատասխան անձանց (պահակների):

2.8. Պայմանագիրը կնքելով Կողմերն ընդունում և հաստատում են, որ Պայմանագրի գործողության ընթացքում՝

2.8.1. Ծրագիրը հաստատող պետական կառավարման մարմիններն իրենց համապատասխան ստորաբաժանումների միջոցով վերահսկում են Աշխատանքների կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում կատարում են Աշխատանքների որակի կամ այլ պայմանների ուսումնասիրություններ.

2.8.2. իրենք պետք է ապահովեն Ծրագրի 19-րդ կետով սահմանված գործողությունների կատարումը և դրանց արդյունքում կազմված տեղեկանքը սահմանված կարգով ներկայացնեն Ծրագիրը հաստատող պետական կառավարման մարմիններին.

2.8.3. Նախագծով սահմանված տարիների հաշվարկը սկսվում է Պայմանագրի կնքման պահից:

2.8.4. Նախագծով սահմանված՝ Պայմանագրի շրջանակներում կատարման ենթակա Անտառապատման աշխատանքների նվազագույն ծավալը (մինչև վեգետացիայի շրջանի ավարտն իրականացված Անտառապատման աշխատանքների արդյունքում հիմնված անտառ-մշակույթների մակերեսը) ըստ տարիների կազմում է՝

Տարի	անտառապատման աշխատանքների նվազագույն ծավալ (կուտակային, հա)
2012թ.	143.8
2013թ.	210.4
2014թ.	262.2
2015թ.	315.0

2.9. Պայմանագրի 2.8.2 կետով սահմանված գործողության պատշաճ կատարման նպատակով Կատարողը պարտավոր է յուրաքանչյուր օրացուցային տարվա ընթացքում իր կողմից կատարված Աշխատանքների ու դրանց արդյունքների վերաբերյալ կազմել ամփոփ հաշվետվություններ՝ ըստ առանձին տարածքների (տեղամասերի) և դրանք Պատվիրատուին ներկայացնել ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նոյեմբերի վերջին աշխատանքային օրը:

### **3. Աշխատանքների կատարման ժամկետները և հանձնման-ընդունման կարգը**

3.1. Պայմանագրի շրջանակներում Աշխատանքները պետք է իրականացվեն Նախագծով սահմանված ժամկետներում՝ առանձին Աշխատանքների պարբերականությամբ ու համապատասխան հերթականությամբ:

3.2. Կատարված Աշխատանքների հանձնում-ընդունումն իրականացվելու է ըստ տարիների:

3.3. Պայմանագրի շրջանակներում կատարված Աշխատանքների հանձնում-ընդունումն իրականացվում է ոչ ուշ, քան տվյալ տարվա նոյեմբերի 15-ը, եթե առանձին Աշխատանքների հանձնման-ընդունման համար Կողմերն այլ ժամանակացույց չեն համաձայնեցնում:

3.4. Պայմանագրի շրջանակներում կատարված Աշխատանքների հանձնում-ընդունումն իրականացվելու է դրանց կատարման մասին Կատարողի ծանուցման հիման վրա:

3.4.1. Կատարողը պարտավոր է փաստացի կատարված և Պատվիրատուին հանձնման ենթակա Աշխատանքների մասին Պատվիրատուին ներկայացվելիք ծանուցման հետ վերջինիս ներկայացնել նաև Պատվիրատուի կողմից ներգրավված անձի եզրակացությունները Կատարողի կողմից կատարված Աշխատանքների որակի և Նախագծով սահմանված պահանջներին ու պայմաններին դրանց համապատասխանության վերաբերյալ:

3.5. Փաստացի կատարված և Պատվիրատուին հանձնման ենթակա Աշխատանքների մասին Պատվիրատուին ներկայացվելիք ծանուցման հետ Կատարողը պարտավոր է Պատվիրատուի ստորագրմանը ներկայացնել հանձնվող Աշխատանքների հանձնման-ընդունման ակտը՝ իր կողմից ստորագրված:

3.6. Համապատասխան ծանուցումն ու կատարված Աշխատանքների հանձնման-ընդունման ակտը ստանալուց հետո Պատվիրատուն պարտավոր է երկշաբաթյա ժամկետում ստուգել ինչպես փաստացի կատարված և հանձնվող Աշխատանքները, այնպես էլ դրանց վերաբերյալ Պայմանագրի 3.4.1 կետով սահմանված անձանց կողմից տրված եզրակացությունները և ստորագրել ներկայացված ակտը, իսկ ներկայացված փաստաթղթերում կամ կատարված Աշխատանքներում թերություններ հայտնաբերելու դեպքում տալ գրավոր մերժում՝ նշելով հայտնաբերված թերությունները և պահանջելով դրանց վերացում:

3.6.1. Աշխատանքները կամ դրանց մի մասը կամ Աշխատանքների առանձին տեսակները համարվում են Կատարողի կողմից կատարված ու Պատվիրատուին հանձնված այդ մասին կազմված համապատասխան հանձնման-ընդունման ակտը Պատվիրատուի (սրա ներկայացուցչի) կողմից ստորագրվելու պահից:

3.6.2. Եթե Կատարողի ներկայացրած փաստաթղթերը ստանալու պահից երկշաբաթյա ժամկետում Պատվիրատուն դրանք չի վերադարձնում կամ կատարված Աշխատանքների վերաբերյալ գրավոր առարկություններ չի ներկայացնում, ապա այդ ժամկետի ավարտման պահից համապատասխան Աշխատանքները համարվում են Կատարողի կողմից կատարված և Պատվիրատուի կողմից ընդունված:

### **4. Պայմանագրի գինը, հաշվարկների և վճարումների իրականացման կարգը**

4.1. Պայմանագրի գինը ձևավորվում է Պայմանագրի գործողության ողջ ընթացքում Կատարողի կողմից իրականացվելիք Աշխատանքների դիմաց վճարվելիք գումարների հանրագումարից և կազմում է \_\_\_\_\_ դրամ, որն իր մեջ չի ներառում ավելացված արժեքի հարկը:

4.2. Պայմանագրի 4.1. կետով սահմանված գնին և Պայմանագրի 4.3. ու 4.4. կետերով սահմանված արժեքներին պետք է գումարվի ավելացված արժեքի հարկը՝ օրենսդրությամբ սահմանված չափով:



4.3. Պայմանագրի շրջանակներում յուրաքանչյուր մեկ հեկտար հողատարածքում Կատարողի կողմից իրականացվելիք Աշխատանքների ընդհանուր արժեքը սահմանվում է \_\_\_\_\_ դրամ, որն իր մեջ չի ներառում ավելացված արժեքի հարկը:

4.3.1. Պայմանագրի 4.3 կետով սահմանված միավոր արժեքը հաշվարկային մեծություն է և իր մեջ ներառում է համապատասխան մեկ հեկտար հողատարածքի վրա իրականացվելիք Աշխատանքների կատարման դիմաց Պայմանագրի գործողության ողջ ընթացքում Կատարողին վճարվելիք գումարների հանրագումարը:

4.4. Պայմանագրի շրջանակներում Կատարողի կողմից Տարածքում իրականացվելիք՝

4.4.1. Ցանկապատման աշխատանքների յուրաքանչյուր մեկ գծամետրի արժեքը սահմանվում է \_\_\_\_\_ դրամ:

4.4.2. Անտառապատման աշխատանքների յուրաքանչյուր մեկ հեկտարի արժեքը սահմանվում է \_\_\_\_\_ դրամ:

4.4.3. Լրացման աշխատանքների ընդհանուր արժեքը յուրաքանչյուր հեկտարի համար սահմանվում է \_\_\_\_\_ դրամ:

4.4.4. Խնամքի աշխատանքների ընդհանուր արժեքը յուրաքանչյուր հեկտարի հաշվով մեկ անգամվա համար սահմանվում է \_\_\_\_\_ դրամ:

4.4.5. Խոտհունձի աշխատանքների ընդհանուր արժեքը յուրաքանչյուր հեկտարի հաշվով յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է \_\_\_\_\_ դրամ:

4.5. Պայմանագրի շրջանակներում բոլոր վճարումները կատարվում են Կատարողի կողմից ներկայացված և Պատվիրատուի կողմից վճարման ընդունված հաշիվ-ապրանքագրերի հիման վրա՝ բանկային փոխանցումով:

4.5.1. Կատարողը պարտավոր է իր կողմից փաստացի կատարված Աշխատանքները կամ դրանց մի մասը կամ առանձին տեսակի Աշխատանքները Պատվիրատուի կողմից ընդունելու պահից հնգօրյա ժամկետում Պատվիրատուին ներկայացնել սահմանված կարգով դուրս գրված հաշիվ-ապրանքագիր:

4.5.2. Բոլոր վճարումներն իրականացվում են համապատասխան հաշիվ-ապրանքագրերը Պատվիրատուի կողմից վճարման ընդունելու պահից հինգ բանկային օրվա ընթացքում:

4.6. Պայմանագրի գործողության վերջին տարվա համար վճարվելիք գումարները Կատարողին կվճարվեն պայմանով, որ վերջինս կապահովի Պայմանագրի 2.7.1 կամ 2.7.2 կետերով սահմանված գործողության կատարումը և համապատասխան հիմնավորող փաստաթղթերը Պատվիրատուին կներկայացնի Պայմանագրի 4.5.1 կետով սահմանված փաստաթղթի հետ միասին:

## **5. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները**

5.1. Պատվիրատուն պարտավոր է՝

5.1.1. Պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետներում Կատարողին տրամադրել Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ տեղեկություններն ու Նախագիծը.

5.1.2. Պայմանագրով սահմանված կարգով ընդունել կատարված Աշխատանքները և վճարել դրանց դիմաց.

5.1.3. ապահովել Աշխատանքների իրականացման նպատակով համապատասխան տարածքներ Կատարողի (որա ներկայացուցիչների) անարգել մուտքի հնարավորությունը:

5.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

5.2.1. ցանկացած պահի ստուգել Կատարողի կողմից իրականացվող Աշխատանքների որակը.

5.2.2. Կատարողից պահանջել համապատասխան տեղեկությունների տրամադրում Աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

5.3. Կատարողը պարտավոր է՝

5.3.1. Աշխատանքները կատարել Պայմանագրով սահմանված կարգով ու համապատասխան պայմանների պահպանմամբ.

5.3.2. Աշխատանքները կատարել Նախագծով սահմանված կարգով, պայմաններով և Պատվիրատուի համար ընդունելի որակով.

5.3.3. Աշխատանքները կատարելիս ապահովել Պայմանագրով սահմանված գործողությունների (առանձին Աշխատանքների) հաջորդական և հետևողական կատարումը.

5.3.4. Աշխատանքները կատարելիս պահպանել աշխատանքի տեխնիկական և հակահրդեհային անվտանգության կանոնները.

5.3.5. Աշխատանքները կատարելիս թույլ չտալ երրորդ անձանց (այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության, համայնքների) իրավունքների ու օրինական շահերի անտեսում և (կամ) ոտնահարում:

5.4. Կատարողն իրավունք ունի՝

5.4.1. Պատվիրատուից պահանջել անտառապատման տարածքների վերաբերյալ տեղեկատվության ժամանակին և պատշաճ տրամադրում.

5.4.2. Պատվիրատուից պահանջել սույն պայմանագրով սահմանված կարգով ընդունել իր կողմից կատարված Աշխատանքները և վճարել դրանց դիմաց:

## **6. Կողմերի պատասխանատվությունը**

6.1. Կողմերն օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով լրիվ նյութական պատասխանատվություն են կրում Պայմանագրով իրենց ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրով սահմանված տարածքներում Աշխատանքները կամ դրանց առանձին տեսակները կամ մասերը Պայմանագրով և (կամ) Նախագծով սահմանված ժամկետներում չիրականացնելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ այդ տարածքում իր կողմից իրականացվելիք Աշխատանքների արժեքի 0.2 տոկոսի չափով:

6.3. Պայմանագրով սահմանված տարածքներում անտառապատման աշխատանքների իրականացման առաջին տարվա ավարտին 40 տոկոսից ցածր միջին կայունականության ապահովման դեպքում կայունականության նշված ցուցանիշից շեղման յուրաքանչյուր տոկոսային կետի համար Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ այդ տարածքում Անտառապատման աշխատանքների՝ սույն Պայմանագրով նախատեսված ընդհանուր արժեքի 1.5 տոկոսի չափով:

6.4. Տվյալ տարածքում անտառապատման աշխատանքների իրականացման երրորդ տարվանից սկսած յուրաքանչյուր տարվա համար ծառերի միջին պահպանվածության 60 տոկոսից ցածր ցուցանիշի (հաշվարկված Նախագծով սահմանված՝ տնկման ենթակա ծառերի քանակի համեմատ) ապահովման դեպքում պահպանվածության նշված ցուցանիշից շեղման յուրաքանչյուր տոկոսային կետի համար Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ այդ տարածքում Անտառապատման աշխատանքների՝ սույն Պայմանագրով նախատեսված ընդհանուր արժեքի 1.5 տոկոսի չափով:

6.5. Յուրաքանչյուր տարածքի համար Նախագծի իրականացման ավարտին ծառերի միջին բարձրության ցուցանիշի խախտման (ավելի ցածր միջին բարձրության ապահովման) դեպքում Նախագծով սահմանված միջին բարձրության ցուցանիշից շեղման յուրաքանչյուր տոկոսի համար

Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ այդ տարածքում Անտառապատման աշխատանքների՝ սույն Պայմանագրով նախատեսված ընդհանուր արժեքի 0.5 տոկոսի չափով:

6.6. Կատարողի փաստացի կատարած Աշխատանքների դիմաց Պայմանագրով սահմանված կարգով հաշվարկված գումարները ժամանակին չվճարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար Պատվիրատուն Կատարողին վճարում է տույժ չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով:

6.7. Տույժերի և տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից:

6.8. Կողմերն ազատվում են Պայմանագրով իրենց ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար սահմանված պատասխանատվությունից, եթե դրանք հետևանք են անհաղթահարելի ուժի հանգամանքների ազդեցության, որոնք ի հայտ են եկել Պայմանագրի կնքումից հետո, էական վնաս են հասցնում Կողմերի կամ նրանցից մեկի բնականոն գործունեությանը, և, որոնք Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխել:

6.9. Անհաղթահարելի ուժի հանգամանքների ազդեցության առաջացման դեպքում Կողմերը պարտավոր են այդ մասին անհապաղ ծանուցել միմյանց՝ նշելով դրանց հնարավոր գործողության և Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման մոտավոր ժամկետները:

6.10. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երկու ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դադարեցնել Պայմանագիրը՝ այդ մասին տեղեկացնելով մյուս Կողմին:

## **7. Վեճերի լուծման կարգը**

7.1. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև առաջացած վեճերն ու տարաձայնությունները ենթակա են կարգավորման Կողմերի անմիջական բանակցությունների միջոցով:

7.2. Վեճի և (կամ) տարաձայնության առաջացման դեպքում Կողմերը պարտավոր են սեղմ ժամկետներում այդ մասին ծանուցել միմյանց և համատեղ բանակցությունների օր նշանակել:

7.3. Եթե վեճի և (կամ) տարաձայնության առաջացման մասին ծանուցումից հետո մեկամսյա ժամկետում Կողմերը համատեղ բանակցություններ չեն սկսում, կամ համատեղ բանակցություններ սկսելուց հետո մեկամսյա ժամկետում վեճը կամ տարաձայնությունը չի հարթվում, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դրա կարգավորման նպատակով դիմել օրենսդրությամբ սահմանված միջոցների:

## **8. Եզրափակիչ դրույթներ**

8.1. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով՝ երկու իրավահավասար օրինակից, որոնցից մեկական օրինակ տրվում է Կողմերին:

8.2. Պայմանագիրը կնքված է համարվում և իրավական ուժ է ստանում ստորագրման պահից ու գործում է մինչև Պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը:

8.3. Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից Կողմերի բանակցությունների ընթացքում Պայմանագրի առարկայի վերաբերյալ ձեռք բերված բոլոր այն պայմանավորվածությունները (գրավոր և բանավոր), որոնք չեն ամրագրվել Պայմանագրում, կորցնում են իրենց ուժը:

8.4. Պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները վավեր են, եթե կազմված են մեկ միասնական փաստաթղթի տեսքով, ստորագրված են Կողմերի կամ նրանց ներկայացուցիչների կողմից և վավերացված են Կողմերի կնիքներով: Պայմանագրի փոփոխություններն ու լրացումները կցվում են Պայմանագրին և հանդիսանում են նրա անբաժանելի մասը:

8.5. Կողմերի միջև ծագող բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվել Պայմանագրով, ենթակա են կարգավորման օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Պատվիրատու

Կատարող

«Թեղուտ»

փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն,

Հայաստանի Հանրապետություն,

ք.Երևան, Խանջյան փող. 19

ՀՎՀՀ 02700773

h/h 15700-10223990100

«Ամերիա Բանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ \_\_\_\_\_

h/h \_\_\_\_\_

Վալերի Մեջլումյան

Գլխավոր տնօրեն